ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ՄԱԾՁԲ-23/01

ք. Երևան «20» հունվարի 2023թ.

«Կադաստրի կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ - ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 64800000 (վաթսունչորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	Բեսթ Սոֆթ ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01568139
Գլխավոր Քարտուղար՝ Մ. Խաչատրյան	Տնօրեն՝ Հ. Մարգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ԿԿ-ՄԱԾՁԲ-23/01
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72211125/1		դրամ	64800000	1	Կոմիտաս 35/2	25.12.2023թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
Քարտուղար՝ Մ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Բեսթ Սոֆթ ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

Տնօրեն՝ Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Ծառայության **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**		
Գնման առարկայի		
h/h	**Անվանումը**	**Տեխնիկական բնութագիրը**
1	Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	**1. ARPIS ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ** ARPIS Էլեկտրոնային համակարգը սպասարկում իրականացնողը պետք է ապահովի առնվազն հետևյալ աշխատանքների կատարումը՝ 1.1 Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում. Թերությունները և բացթողումները տարանջատվում են երկու տեսակի՝ անհետաձգելի շտկում պահանջող թերություններ և համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված թերություններ Անհետաձգելի շտկում պահանջող թերություններ են համարվում համակարգի աշխատանքի այն խոչընդոտները, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը: Անհետաձգելի շտկում պահանջող թերությունները պետք է շտկվեն 24 ժամվա ընթացքում 1.2 Համակարգի տվյալների շտեմարանների և ծրագրային ֆայլերի պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից 1.3 Պատվիրատուի կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգի տվյալների բազայից հաշվետվությունների ստացում 1.4 Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում 1.5 Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված պայմաններով համակարգում մուտքագրված դիմումների տարբեր փուլերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում

		1.6 Պատվիարտուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականացման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում 1.7 Պատվիրատուի պահանջով համակարգում մուտքագրված դիմումների համար կազմվող ավարտական փաստաթղթերի ձևաթղթերի փոփոխությունների կատարում 1.8 Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում տարբեր մարմիններին տրամադրվող (այդ թվում՝ պաշտոնական կայքում առկա) էլեկտրոնային նոր ծառայությունների տրամադրում (գործող ծառայությունների մինչև 30% փոփոխության պարագայում), գործող ծառայությունների ձևափոխում, կրկնօրինակում այլ մարմինների համար և լրացում 1.9 Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխությունների և լրացումների կատարում 1.10 Պատվիրատուի պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում 1.11 Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում 1.12 Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում և թերությունների վերացում 1.13 Անհետաձգելի շտկում պահանջող թերությունների ի հայտ գալու դեպքում Էլեկտրոնային համակարգի սպասարկումը պետք է իրականացվի նաև ոչ աշխատանքային օրերին՝ համակարգում կիրառվող ցանցային եղանակով սպասարկվող այլ ծառայությունների հետ աշխատանքը չընդհատելու նպատակով 1.14 Համակարգում ծրագրային փոփոխություններ իրականացնելու դեպքում այն նախ պետք է տեղադրել Կադաստրի կոմիտեի թեստային միջավայրում, որտեղ թեստավորումից հետո, պատվիրատուի համաձայնության դեպքում տեղադրել այն հիմնական միջավայրում 1.15 Կոմիտեի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի հիման վրա ARPIS համակարգում գործող ֆունկցիոնալ բաղադրիչների վրա կատարել փոփոխություններ և լրացումներ (մոդուլներ, հավելումներ և այլն)

		1.16 Ծրագրային թարմացումների միջավայրերը, ժամկետները, հերթականությունը համաձայնեցնել Կադաստրի կոմիտեի հետ 1.17 Կադաստրի կոմիտեում նոր համակարգերի կամ մոդուլների ներդրման դեպքում ապահովել ինտեգրումը ARPIS համակարգի հետ, եթե նոր համակարգը համապատասխանում է ARPIS-ի ճարտարապետության հետ 1.18 ARPIS համակարգի հետ ինտեգրված համակարգերի աշխատանքն ապահովելու համար կատարել անհրաժեշտ ծրագրային փոփոխություններ և շտկումներ 1.19 ARPIS համակարգի հետ ինտեգրված համակարգերի աշխատանքներն իրականացնելու նպատակով և պատվիրատուի պահանջով տվյալների շտեմարանից արտահանել և տրամադրել տեղեկատվություն՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացված ձևաչափի: **2. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ** Սահմանափակումների էլեկտրոնային ենթահամակարգի սպասարկում իրականացնողը պետք է ապահովի հետևյալ աշխատանքների կատարումը՝ 2.1 Ապահովել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված սահմանափակում կիրառող մարմիններում առկա էլեկտրոնային համակարգերի և ARPIS էլեկտրոնային համակարգի միջև տվյալների փոխանակման համար ստեղծված էլեկտրոնային ծառայության անխափան աշխատանքը 2.2 Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում 2.3 Պատվիրատուի պահանջով կատարել սահմանափակում կիրառող մարմիններ ուղարկվող պատասխան գրությունների ձևաթղթերի և տվյալների փոփոխություններ 2.4 Ապահովել համակարգի անվտանգությունը՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը

		2.5 Օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակների ստեղծում 2.6 Պատվիրատուի պահանջով և ներկայացված ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում 2.7 Պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների ներբեռնում համակարգ 2.8 Պատվիրատուի պահանջով համակարգերում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում 2.9 Անհրաժեշտության դեպքում համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում 2.10 Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում 2.11 Անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ծրագրային փոփոխություններ և կարգաբերումներ սահմանափակում կիրառող որևէ այլ մարմինների էլեկտրոնային համակարգերի հետ ինտեգրման համար 2.12 Սահմանափակումների էլեկտրոնային ենթահամակարգում ստեղծել հնարավորությունն և ապահովել անխափան աշխատանք թղթային եղանակով ստացված արգելանքների և սահմանափակումների վերաբերյալ որոշումները թվայնացնելու և համակարգ մուտքագրելու համար **<u>3. www.e-cadastre.am</u> ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ** www.e-cadastre.am կայքի տեխնիկական սպասարկման ծառայությունները մատուցողը պետք է կատարի կայքի տեխնիկական սպասարկման հետևյալ աշխատանքները՝ 3.1 Կայքի անվտանգության ապահովում չարտոնագրված մուտքերից շուրջօրյա ռեժիմով (24/7) 3.2 Օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակների ստեղծում 3.3 Կայքի վերականգնում պահուստային կրկնօրինակներից՝ ըստ պատվիրատուի պահանջի

		3.4 Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքի փոփոխություններ, նաև բաժինների ծրագրային թարմացում 3.5 Կայքի այցելությունների և որոնողական համակարգերում կայքի տեսանելիության վերաբերյալ պարբերաբար մոնիտորինգի իրականացում, պատվիրատուի պահանջով մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում 3.6 Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալների ուղղում 3.7 Հոսթինգի կառավարում, դրա կարգավորումների դիտարկում և փոփոխությունների իրականացում՝ ըստ տեխնիկական անհրաժեշտության կամ պատվիրատուի պահանջի 3.8 Որոնման համակարգերի համար կատարել Կայքի օպտիմալացում և համապատասխան կարգաբերումներ 3.9 Իրականացնել կայքի հետ աշխատող պատվիրատուի անձնակազմի տեխնիկական աջակցություն 3.10 Կայքի առանձին գրաֆիկական մասերի փոփոխությունների (որոնք չեն հանգեցնում Կայքի ընդհանուր արտաքին տեսքի փոփոխություն), ըստ պատվիրատուի պահանջի 3.11 Կայքի տվյալների շտեմարաններից պատվիրատուի պահանջով հաշվետվությունների արտահանում 3.12 Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների կամ սխալների վերացում 3.13 Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների ծրագրային ապահովման անխափան աշխատանքի ապահովում: 3.14 ARPIS համակարգում ստեղծվող դիմումի տեսակների, գործառույթների և այլ փոփոխությունների իրականացում, եթե դրա անհրաժեշտությունն առաջանում է www.e-cadastre.am կայքում 3.15 Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվող գործառույթների ավտոմատացման դեպքում www.e-cadastre.am կայքի համապատասխան բաժիններում ծրագրային փոփոխությունների իրականացում 3.16 www.e-cadastre.am կայքում վարվող տարբեր բաժինների համար ստեղծել հաշվետվություններ և տվյալներ արտահանելու հնարավորություն

		3.17 www.e-cadastre.am կայքում ստեղծել օգտվողների տարբեր խմբեր կայքի բաժիններին հասանելիություն և իրավունքների տրամադրում իրականացնելու նպատակով:
		4. ՎՃԱՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ARPIS համակարգում և www.e-cadastre.am կայքում Վճարման տվյալների մուտքագրման ենթահամակարգի սպասարկում իրականացնողը պետք է ապահովի հետևյալ աշխատանքների կատարումը՝ 4.1 Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում 4.2 Պատվիրատուի պահանջով անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում 4.3 Պատվիրատուի պահանջով և ներկայացված ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում 4.4 Անհրաժեշտության դեպքում համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում 4.5 Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում 4.6 Անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ծրագրային փոփոխություններ և կարգաբերումներ բանկերի, Հայփոստի և այլ վճարահաշվարկային կազմակերպությունների հետ փոխգործելիության ապահովման 4.7 Վեբ սերվիսների միջոցով վճարման տվյալների մուտքագրման համար հարցումների և պատասխանների լոգավորում 4.8 Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացած թերությունների արդյունքում խոտանված տվյալների շտկում և պատվիրատուի հետ համաձայնեցման արդյունքում դրանք համակարգ մուտքագրում 4.9 Համակարգի աշխատանքի ընթացքում տեխնիկական խնդիրների առաջացման դեպքում վճարումների իսկության ստուգում վճարային կազմակերպությունների հետ

5. ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

5.1 ARPIS համակարգի և www.e-cadastre.am կայքի միջև գործող գնահատողների և գնահատված գույքի վերաբերյալ տվյալների փոխանակման համար նախատեսված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված ծրագրային թերությունների կամ սխալների վերացում, ինչպես նաև զարգացում և լրացում

5.2 Պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների ներբեռնում համակարգ, ինչպես նաև տվյալների արտահանում պահանջվող ձևաչափերով

5.3 Պատվիրատուի պահանջով համակարգերում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում

5.4 Գնահատողների, գնահատման կազմակերպությունների և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների անվանացանկերի ինքնաշխատ վարում, փոփոխում և հրապարակում

5.5 Պատվիրատուի պահանջով և ներկայացված ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում

5.6 Անհրաժեշտության դեպքում համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում

5.7 Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում

5.8 Համակարգում գործող հաշվետվողական և անալիտիկ գործիքների վեբ սերվիսների և ծրագրային կոդերի անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում դրանց ձևափոխում և կարգաբերում

6. ՉԱՓԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

6.1 ARPIS համակարգի և www.e-cadastre.am կայքի միջև գործող չափագրողների և չափագրված գույքի վերաբերյալ տվյալների

		փոխանակման համար նախատեսված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված ծրագրային թերությունների կամ սխալների վերացում, ինչպես նաև զարգացում և լրացում 6.2 Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային փոփոխությունների մասով աշխատակազմի վերապատրաստում 6.3 Պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների ներբեռնում համակարգ, ինչպես նաև տվյալների արտահանում պահանջվող ձևաչափերով 6.4 Պատվիրատուի պահանջով չափագրողների համար նախատեսված համակարգերում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում 6.5 Չափագրողների և չափագրման կազմակերպությունների անվանացանկերի վարում, փոփոխում և անհրաժեշտության հրապարակում 6.6 Պատվիրատուի պահանջով և ներկայացված ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում 6.7 Անհրաժեշտության դեպքում համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում 6.8 Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում 6.9 Համակարգում գործող հաշվետվողական և անալիտիկ գործիքների վեբ սերվիսների և ծրագրային կոդերի անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում դրանց ձևափոխում և կարգաբերում 7. ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՍՑԵՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ **7.1** ARPIS համակարգի և www.e-cadastre.am կայքի միջև գործող հասցեների տրամադրման, փողոցների անվանման ավելացման կամ անվատափոխման վերաբերյալ տվյալների փոխանակման համար նախատեսված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի

		ընթացքում հայտնաբերված ծրագրային թերությունների կամ սխալների վերացում, ինչպես նաև զարգացում և լրացում 7.2 Պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների ներբեռնում համակարգ, ինչպես նաև տվյալների արտահանում պահանջվող ձևաչափերով 7.3 Պատվիրատուի պահանջով համակարգերում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում 7.4 Համայնքների և համայքնքային օգտվողների ստեղծում և վարում վարում, փոփոխում և հրապարակում 7.5 Պատվիրատուի պահանջով և ներկայացված ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում 7.6 Անհրաժեշտության դեպքում համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում 7.7 Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում 7.8 Համակարգում գործող հաշվետվողական և անալիտիկ գործիքների վեբ սերվիսների և ծրագրային կոդերի անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում դրանց ձևափոխում և կարգաբերում **8. ARPIS ՀԱՄԱԿԱՐԳԻ, www.e-cadastre.am ԿԱՅՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** 8.1 Սույն տեխնիկական բնութագրի համաձայն էլեկտրոնային համակարգերի, համակարգչային սերվերների ծրագրային սպասարկման և պահպանման ծառայությունների մատուցողը (այսուհետ՝ Սպասարկող) պետք է կատարի ծրագրային սպասարկման հետևյալ աշխատանքները՝ 8.2 Կազմակերպել Կադաստրի կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ներդրված ARPIS էլեկտրոնային համակարգի և www.e-cadastre.am կայքի և դրանց համալրող միջոցների, սերվերային միջավայրի և ծրագրերի սպասարկում. 8.3 Ապահովել Կոմիտեի էլեկտրոնային համակարգերի մի շարք սերվերների օպերացիոն համակարգերի և ծրագրային սպասարկում.

			8.4 Կատարել սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգերի Linux Ubuntu, Centos) պարբերական վերաթարմացում. 8.5 Սերվերներում տեղադրված Էլեկտրոնային համակարգերի կամ սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում, ծրագրային բաղադրիչները տրամադրվելու են կոմիտեի կողմից. 8.6 Սերվերների հսկում (մոնիտորինգ), ինչպես նաև առաջացած խնդիրների լուծման տարբերակների առաջադրում: 8.7 Նոր սերվերների կարգաբերում, ապահովելով համակցումը դրանց և համակարգում գործող սերվերների միջև. 8.8 Ապահովել կոմիտեի տեղեկատվական համակարգի ենթակառուցվածքը սպասարկող սերվերների հսկումն ու առաջացած խնդիրների լուծումը, 8.9 Ապահովել սերվերների անվտանգությունը: Անվտանգությունը պատշաճ մակարդակով ապահովելու համար կատարել սերվերների անթույլատրելի ներխուժումներին, վիրուսային վտանգներին, անթույլատրելի ծրագրերի տեղադրմանն ու չարտոնված այլ գործողություններին ուղղված միջոցառումներ. 8.10 Սերվերներում պահվող տվյալների օրական արխիվացում և անհրաժեշտության դեպքում տվյալների վերականգնում 8.11 «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» ARPIS էլեկտրոնային համակարգը սպասարկող թվով մինչև 50 վիրտուալ սերվերների ծրագրային ապահովման (Apache, PHP, Oracle, MySql) թարմացում, անհրաժեշտության դեպքում կարգաբերում, պահուստային պատճենների ստեղծում (օրեկան, շաբաթական, ամսեկան կամ ըստ անհրաժեշտության՝ փոփոխությունների դեպքում) և անհրաժեշտության դեպքում վերականգնում պահուստային պատճեներից 8.12 Անհրաժեշտության դեպքում նոր վիրտուալ սերվերների ստեղծում և կարգաբերում. 8.13 Ապահովել «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» ARPIS էլկտրոնային համակարգի անվտանգությունը՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը. 8.14 Անմիջական տվյալների փոխանցման երթուղավորում դեպի Ինտերնետ 8.15 Proxy-սերվերի միջոցով ապահով կապ դեպի Ինտերնետ (WWW, HTTP, HTTPS, FTP և այլն).

			8.16 Տրամադրել Proxy-սերվերի միջոցով իրավունքների ավելացման, խմբագրման և հեռացման հնարավորության ծրագրային ապահովում Web արտադեմով, 8.17 DNS (Domain Name Service) ծառայության սպասարկում cadastre.am, mail.cadastre.am դոմենների համար. 8.18 Էլեկտրոնային փոստ (E-Mail) ծառայության սերվերի տեղադրում և սպասարկում (ապահովելով SMTP, POP, IMAP, Mailing Lists հնարավորությունները), (E-Mail) ծառայության ադմինիստրատիվ աշխատանքների հետ կապված ծառայությունների մատուցում և արտադեմի ստեղծում՝ էլեկտրոնային հասցեների ստեղծման, հեռացման, խմբագրման, գաղտնաբառի փոփոխման, հիշողության ծավալի փոփոխման համար: 8.19 Ներդնել էլեկտրոնային փոստի հակավիրուսային և այլ պաշտպանությունով (Antivirus, Antispam, Antispyware support) ծրագրային ապահովում. 8.20 Վեբ Էլեկտրոնային փոստ (Webmail) ծառայության սպասարկում HTTPS անվտանգ միացման հնարավորությունով. 8.21 Էլեկտրոնային փոստի պահուստային պատճենների ստեղծում ամենօրյա ռեժիմով. 8.22 Հասանելիություն ինտերնետային տեղեկություններին և տվյալների հենքերին (MySQL, LDAP). 8.23 Տվյալների անվտանգ ցանցային փոխանցում (VPN, VTUN, SSH, SFTP, SSL, Stunnel), հասանելիության ապահովում Կոմիտեի անհրաժեշտության դեպքում. 8.24 Բազմաշերտ ցանցային անվտանգություն (Firewall) ցանցային ներխուժման փորձերի ախտորոշման և արգելափակման ավտոմատացված համակարգով. 8.25 Ցանցային սերվերների և ծառայությունների հեռակառավարում. 8.26 Սերվերների և երթուղավորիչների կարգաբերում և սպասարկում(Server/Router configuration and maintenance). Կադաստրի կոմիտեի պահանջով տրամադրել կարդալու թույլտվությամբ (read access) հասանելիություն երթուղիչների և հրապատերի բոլոր կարգաբերումներին: 8.27 Կոմիտեի սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցներին տրամադրվող ինտերնետի համաչափ և համակարգված տրամադրման համար սպասարկման

		ընթացքում տրամադրել օպտիմալ կարգաբերման գործիք, որը հնարավորություն կընձեռնի սահմանափակել ինտերնետ հասանելիությունը՝ ըստ օգտագործողի, ըստ կայքի հասանելիության, ըստ օգտագործողին հասանելի կայքի և օգտագործողների համար ըստ արագության: 8.28 Ապահովել ինտերնետի անխափան աշխատանքը պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ կիրարելով dynamic-routing (BGP protocol) ինտերնետ մատուցող կազմակերպության հետ. 8.29 Ապահովել տարբեր շահառուների հասանելիությունը Կադաստրի կոմիտեի ներքին ցանցին, կամ որոշակի համակարգերի և ծառայությունների, սահմանափակելով դրանց ըստ IP-ների և ծառայությունների 8.30 Ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր Layer2 ենթացանցերի. 8.31 Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների Layer2 ենթացանցերի. 8.32 Ապահովել ուղղորդում (routing) վերոնշյալ Layer2 խմբերի միջև 8.33 Պատվիրատուի կողմից տրամադրված SSL անվտանգության սերտիֆիկատների տեղադրում և կարգաբերում սերվերների վրա **9. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ** ARPIS-ի և հարակից մոդուլների փաստաթղթավորումը ներառում է հետևյալ կետերը. 9.1 **Ճարտարապետանախագծային փաստաթղթավորում** - Սպասարկողը պարտավոր է իրականացնել համակարգի ամբողջական փաստաթղթավորում, այն է՝ ընդհանուր ճարտարապետությունը, որտեղ պետք է նշվի տվյալների շտեմարանի կառուցվածքի նկարագրությունը, ծրագրային ճարտարապետության մոդելը և սկզբունքները : 9.2 **Տեխնիկական փաստաթղթավորում** - պետք է նկարագրվի ծրագրային կոդի յուրաքանչյուր ասպեկտը, թե կոնկրետ ինչի համար է գրված տվյալ կոդի մասը: Նկարագրությունը կարող է ներառվել անմիջական կոդի մեջ կամ տրամադրվել հավելյալ փաստաթղթով:	

Պետք է տրամադրվի մանրամասն տեխնիկական նկարագիր առկա API-ների և ալգորիթմների համար:

9.3 **Օգտվողի փաստաթղթավորում** - պետք է նկարագրվի ինչպես օգտագործել ծրագիրը, ծրագրի յուրաքանչյուր ֆունկցիան, քայլերը որոնք պետք է կիրառվեն տվյալ ֆունկցիան իրականացնելու համար և ինչպես վարվել խնդիրներ առաջանալու դեպքում:

Փաստաթղթավորումը լինելու է միշտ ակտուալ, թարմացվելու է յուրաքանչյուր ծրագրային փոփոխության ընթացքում, ունենալու է հստակ կառուցվածք:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Ծառայությունը պետք է մատուցվի աշխատանքային օրերին, իսկ այն մասով, որը ապահովում է կոմիտեի ինտերնետային կայքերի և վեբ սերվիսների անխափան աշխատանքի ապահովմանը, նաև ոչ աշխատանքային օրերին՝ կայքերի անխափան աշխատանքի համար ծրագրային խոչընդոտների առկայության դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է աշխատանքային օրերի ընթացքում համակարգերի անխափան աշխատանքները ապահովելու համար:

10.2 Կատարողը պարտավոր է համագործակցել Պատվիրատուի կողմից ներկայացված ծրագրային համակարգերի որակի ապահովում (QA) իրականացնող կազմակերպության հետ:

10.3 Կատարողը պետք է ունենա անշարժ գույքի կառավարման համակարգերի ստեղծման և սպասարկման, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

10.4 Սպասարկման ընթացքում կատարողը պատվիրատուի պահանջով պետք է կատարի ծրագրային փոփոխություններ: Կատարված ծրագրային փոփոխությունների համար Պատվիրատուն նախորդ եռամսյակում կատարված ծրագրային փոփոխությունների համար կազմում է հաշվետվություն, որը երկկողմ ստորագրվում է և հետագայում հանդիսանում է վերը նշված տեխնիկական բնութագրի մաս:

10.5 Պատվիրատուի կողմից ներկայացված ծրագրային փոփոխությունների իրականացման համար պետք է սահմանել առավելագույնը 45 օր ժամկետ՝ շաբաթական կտրվածքով ներկայացնելով ընթացիկ փոփոխության կարգավիճակի վերաբերյալ

		տեղեկատվություն: Ծրագրային գլոբալ փոփոխություն կատարելու դեպքում սպասարկող ընկերության կողմից 45 օրյա ժամկետում աշխատանքների իրականացման անհնարինության դեպքում ընկերությունը պարտավոր է ներկայացնել հիմնավորում և իրականացման մոտավոր ժամանակացույց: 10.6 Կատարողը պետք է սպասարկման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների և առաջացած խնդիրների, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերազինման մասին անհրաժեշտության դեպքում Պատվիրատուին ներկայացնի առաջարկություններ: 10.7 Սպասարկման ժամկետի վերջում Սպասարկողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները (մուտքի անուններ, գաղտնաբառեր, ցանցի տոպոլոգիայի փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ և այլն), ծրագրային փոփոխությունների կոդերը ու ելակետային նյութերը /source code/:

մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագրի հաշվառման պահից սկսած	25.12.2023թ.

Հավելված N 2
ԿԿ-ՄԱԾՁԲ-23/01
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211125/1	Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	5400000	10800000	16200000	21600000	27000000	32400000	37800000	43200000	48600000	54000000	59400000	64800000	**64800000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
Քարտուղար՝ ----------Մ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Բեսթ Սոֆթ ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

Տնօրեն՝ ----------Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
ԿԿ-ՄԱԾՁԲ-23/01
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԿԿ-ՄԱԾՁԲ-23/01
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն